



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի Գիտական խորհուրդը հանդիսանում է ներկայացուցչական, խորհրդակցական մարմին՝ առողջապահական, գիտական, ուսումնական և մեթոդաբանական գործունեության հիմնական հարցերը քննարկելու և որոշումներ կայացնելու համար: Իր գործունեության ընթացքում Գիտական խորհուրդը առաջնորդվում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքներով, ԱԱԻ կանոնադրությամբ, Գիտխորհրդի Կանոնակարգով և այլ իրավական փաստաթղթերով, որոնցով կարգավորվում է ՀՀ առողջապահական և գիտաուսումնական հաստատությունների գործունեությունը: Գիտական խորհուրդը որոշում է գիտական և ուսումնական աշխատանքների կազմակերպման հիմնական հարցերը,

- գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունները,
- հաստատում է ատենախոսական աշխատանքների նախագիծը (անոտացիոն պլանները),
- հաստատում է ատենախոսական աշխատանքների վերաբերյալ առաջատար կազմակերպության կարծիքը,
- քննարկում է ԱԱԻ տնօրենի, տնօրենի տեղակալների և կառուցվածքային բաժինների ղեկավարների հաշվետվությունները՝ իրենց աշխատանքի արդյունքների և զարգացման հեռանկարային ծրագրերի վերաբերյալ,
- քննարկում է հանրապետության այլ հաստատություններից ուղարկված փաստաթղթերը և հաստատում է դրանց վերաբերյալ գրախոսականները
- քննարկում է ԱԱԻ աշխատողներին պատվավոր կոչումներ շնորհելու առաջարկությունները,
- հաստատում է ուսումնական ձեռնարկների, մենագրությունների, դասագրքերի մեթոդական ցուցումների և այլ գիտակրթական նյութերի հրատարակման երաշխավորումները,
- իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և ինստիտուտի կանոնադրությունից բխող այլ լիազորություններ,
- շնորհում է «ԱԱԻ պատվավոր պրոֆեսորի» կոչում:

Գիտական խորհրդի կազմում ընդգրկվում են

- ԱԱԻ-ի տնօրենը,
- գիտական քարտուղարը,
- հանրապետության կենսաբժշկագիտության, բժշկական կրթության և գործնական առողջապահության առաջատար գիտնականները
- այլ հարակից բնագավառների մասնագետները: